2006, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (225)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ամենայն հայոց կաթողիկոսի այցը Մոսկվա

Հուլիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու աշխարհի կրոնապետերի համաժողովին:

Հայրապետական պատվիրակության կազմում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արք. Գալփաքյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը: Հայրապետական պատվիրակության կազմում էր նաեւ Տ. Վիգեն եպս. Այքազյանը, ով համաժողովին մասնակցեց իբրեւ ԱՄՆ եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ:

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց Լիբանանի արտաքին գործերի եւ սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխին





Հուլիսի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց Լիբանանի արտաքին գործերի եւ սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխին՝ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Վեհափառ հայրապետը ողջունեց հյուրերին եւ ի դեմս պրն Սալլուխի՝ իր երախտագիտությունը հայտնեց Լիբանանի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նշեց, որ ադ վերաբերմունքի շնորհիվ է, որ ցեղասպանությունից վերապրած բազմաթիվ հայեր, ապաստան գտնելով Լիբանանում, իբրեւ երկրի արժանավոր քաղաքացիներ, կարողացան վերսկսել ու զարգացնել նաեւ իրենց ազգային, հոգեւոր ու կրոնական կյանքը:

*«Ուրախ ենք եւ հպարտ որպես Ամենայն Հայոց հայրապետ, որ մեր ժողովրդի զավակները որպես արժանավոր քաղաքացիներ Լիբանանի, իրենց կարեւոր ներդրումն ունեն Լիբանանի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում: Նաեւ ուրախ ենք եւ մեզ համար հաճելի է, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը նույնպես իշխանությունների մշտական ուշադրության ներքո է, եւ լավ հարաբերություններ են ձեւավորված երկուստեք»*,- ասաց Վեհափառ հայրապետը:

Իր հերթին Ֆ. Սալլուխը բարձր գնահատեց լիբանանահայ համայնքի ներդրումը երկրի զարգացման գործում: Նախարարը հատկապես ընդգծեց հայ համայնքի ավանդը կրթական, առողջապահության եւ այլ ոլորտներում:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ

### (1081-1105-1113)

*Սկիզբը՝ թիվ 12*

Կրկին զորեղացնելով իր իշխանությունը՝ Թորոսը փորձեց այն ընդարձակել Կապադովկիայի ուղղությամբ: Այստեղ նրան հաջողվեց տիրել Կիզիստրա բերդին, որը պատկանում էր ազգությամբ հույն Մանդալե եղբայրներին, որոնք ժամանակին սպանել էին հայոց Գագիկ Աշոտյան թագավորին: Այն ժամանակ հայ իշխանները փորձեցին վրեժ լուծել հայ գահակալի սպանության համար, անգամ Փիլարտոս իշխանը հարձակվեց Կիզիստրայի վրա, սակայն նրանք չհաջողեցին՝ Կիզիստրայի խիստ անառիկության պատճառով: Հազիվ թե հայերը հաշտվել էին դրա հետ, եւ երբ հարմար առիթը ներկայացավ, Մանդալե եղբայրները ստիպված եղան պատասխան տալ դրա համար: Մանդալե եղբայրներից մեկն անգամ խնամիություն ուներ Թորոսի հետ: Այդ առնչությամբ Մանդալեները խոստացել էին Կիզիստրան հանձնել Թորոսին, եւ վերջինս գնաց Կիզիստրայի կողմերը՝ բերդը ստանալու համար: Իր հերթին նա պատրաստ էր նրանց բնակության տեղ առաջարկել իր իշխանության ցանկացած գավառում: Սակայն Մանդալե եղբայրները հրաժարվեցին իրենց խոստումից՝ պատճառաբանելով, թե բերդն իրենց հայրենիքն է: Թորոս իշխանը խիստ զայրացավ, բերած ընծաները ետ տարավ եւ սպառնաց, որ պատրաստ լինեն ամեն ինչի: Նա բերդի շուրջը դարանակալ զորամասեր տեղադրեց, իսկ ինքը կեղծ հարձակումից հետո իբրեւ թե իր զորամասերով փախուստի դիմեց: Եվ երբ Մանդալե եղբայրների բերդապահները փորձեցին հալածել Թորոսի «փախչող» զորամասերին, հայոց իշխանի դարանակալ ջոկատները գրավեցին Կիզիստրան: Լուր առնելով անառիկ բերդի գրավման մասին՝ Թորոսը մտավ Կիզիստրա, որտեղ ձերբակալվել էին Մանդալե եղբայրները: Հայոց իշխանը նրանցից պահանջեց Գագիկ Աշոտյան թագավորի սուրն ու հանդերձները, որոնք իսկույն հանձնվեցին, սակայն Մանդալեները կտրականապես հրաժարվեցին հայտնել իրենց գանձերի տեղը: Այդ ժամանակ Թորոսը կարգադրեց խոշտանգել ավագ Մանդալե իշխանին, որը ջուր թափելու պատրվակով՝ իրեն ժայռից վայր նետեց եւ ջախջախվեց: Իսկ երբ ձեռնամուխ եղան միջնակ եղբորը խոշտանգելուն, նա Թորոսին սպառնաց հետեւյալ խոսքերով. «Դու հայ մարդ ես, իսկ մենք՝ հոռոմ (հույն - Բ. Հ.) իշխաններ, ի՞նչ պատասխան ես տալու Հոռոմաց թագավորին, եթե մեզ դատես»: Դրա վրա խիստ զայրացած Թորոսը սկսեց նրան կռանի բրով չարաչար հարվածել եւ պատասխանեց. «Ո՞վ էիք դուք, որ Հայոց օծյալ թագավորին սպանեցիք»:



Միջնակ Մանդալեն մահացավ նրա հարվածների տակ: Հետո Թորոսի զինվորները գտան հույն իշխանների հարստությունները, ինչպես նաեւ մեծ թվով արծաթի խաչեր եւ ոսկեձույլ պատկերներ, իսկ կրտսեր Մանդալե իշխանը տարվեց Կիլիկիա եւ բանտարկվեց Վահկա ամրոցում: Կիզիստրան միացվեց Թորոսի իշխանությանը: Այնտեղ հայ բերդակալներ հաստատվեցին, իսկ բնակչությունը տեղափոխվեց Պառատիս գետի ափերը: Այսպիսով՝ Գագիկ Աշոտյանի վրեժը լուծվեց միայն 32 տարի անց՝ 1111 թվին:

1112 թվին Գող Վասիլի իշխանությունը ենթարկվեց նոր արշավանքների վերոհիշյալ Մահմուդ զորավարի կողմից: Վերջինս արշավեց Ուռհայի կողմից, իջավ Սուրբ Վկայք կոչվող վայրը, որը Մ. Օրմանյանը սխալմամբ նույնացնում է Մարտիրոսուպոլսին կամ Նփրկերտին, եւ Եղիայի շաբաթ օրը կամ հունիսի 15-ին հասավ Արուճ: Յոթ օր մնալով Արուճում՝ նա կրկին արշավեց Եդեսիա կամ Ուռհա եւ մատնությամբ գրավեց քաղաքը: Բարեբախտաբար այդ նույն ժամանակ Ուռհա հասավ Ջոսլին կամ Ճոսլին Թլպաշարի կոմսը եւ քաղաքացիների օգնությամբ քշեց թուրքերին: Թվում էր, թե ամեն ինչ հաջող է դասավորվում, սակայն Բոլդվինը եւ Ջոսլինը առաջ բերին բոլորի զայրույթը՝ կյանքից զրկելով Ուռհայի բազմաթիվ անմեղ քաղաքացիների: Անտիոքի կոմս Տանկրեդը, որ միայն օգնություն էր տեսել Գող Վասիլից, առանց որեւէ շարժառիթի հարձակվեց վերջինիս վրա՝ ձեւականորեն պատճառ բռնելով նրա կողմից Բոլդվինին ու Ջոսլինին օգնած լինելը: Տանկրեդը գրավում է Ռաբան քաղաքը, իսկ Գող Վասիլը, ետ վերադարձնելով Հարսանմսուր, Թորեբ եւ Ուրիմ ավանները, որ վերջերս էր գրավել լատիններից, վերստանում է Ռաբանը եւ հաշտություն կնքում Տանկրեդի հետ: Դրանից շատ չանցած՝ նույն տարվա արեգ ամսի 24-ին կամ 1112 թվականի հոկտեմբերի 12-ին նա կնքում է իր մահկանացուն: Իր մեծ հաջողությունների համար նա հայ պատմիչների կողմից հիշատակվում է «իշխան Հայոց» եւ «իշխանաց իշխան» տիտղոսներով: Մատթեոս Ուռհայեցու խոսքերով՝ նա կարողացել էր իր շուրջը համախմբել Բագրատունիների եւ Պահլավունիների ողջ զորքը, նրա հովանավորության ներքո էր հայոց կաթողիկոսությունը, իսկ նրա իշխանությունում կենտրոնացել էին մեծ թվով հայեր, եկեղեցու հոգեւոր հայրեր՝ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ այլ կրոնավորներ: Իր կառավարման շրջանում նա խիստ ընդարձակել էր իր իշխանությունը՝ տիրելով բազում բերդերի եւ գավառների: Գող Վասիլը, դժբախտաբար, ժառանգներ չուներ, իսկ նրա զորավարներ Աբլասաթը եւ Տիգրանը մինչ այդ սպանվել էին թուրքերի հետ ունեցած կռիվներում: Հավանաբար կենդանի չէր նաեւ նրա քեռի Պետրոսը, որովհետեւ Բարսեղ կաթողիկոսը մեծ ժողով գումարեց եւ նրա հաջորդ հռչակեց Վասիլ Կամսարական Տղա իշխանին: Գող Վասիլը թաղվեց Կարմիր վանքում՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի շիրմի հարեւանությամբ:

*Շարունակությունը՝ էջ 3*

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



*Սկիզբը՝ թիվ 4-12*

Գաղտնիքը կբացահայտվի, եթե հիշենք Մաշտոցի առաջին քարոզչությունը Գողթնում մի քանի տարի առաջ, երբ տեղի քրմերը, ոչ առանց նրա թույլտվության, իրենց կուռքերի արձաններով ու գաղտնագիր մատյաններով հեռացան Գողթնից եւ ապաստանեցին Մարաց կողմերում: Այժմ էլ Մաշտոցը թագավորի հրամանով եւ անշուշտ նաեւ Սահակ կաթողիկոսի գիտությամբ, իր նորագյուտ այբուբենը տանում է նույն այդ Մարաց կողմերը՝ ներկայացնելու այստեղ ապաստանած իր նախածանոթ Գողթան քրմերին, որոնք հմուտ էին հայ հին գրչության արվեստին: Այս ենթադրությունը հաստատվում է եւ նրանով, որ Մաշտոցը Մարաց կողմերն է գնում հայոց Վռամշապուհ արքայի հրամանով, մինչդեռ մյուս գավառների ուսուցման համար բավական էր միայն Սահակ եպիսկոպոսի հավանությունը: Անկասկած, Վռամշապուհի հրամանը պետք է ուղղված լիներ հեթանոս քրմերին, որոնք հնազանդվում էին թագավորի հրամանին, այլ ոչ քրիստոնյա հովվապետի խոսքին: Ակներեւ է, Մաշտոցը ցանկանում էր պարզել քրմերի կարծիքն իր նոր այբուբենի մասին, ինչպես եւ ճշգրտել իր ստեղծած նշանագրերի գծագրական նրբությունները հայ ավանդական գեղագրության՝ գրչական արվեստի կանոններով, որով գրեթե ի չիք էր դառնում հելլեն գրիչ Հռոփանոսի ոճագրական ազդեցությունը:

Անհրաժեշտ էր, ի վերջո, լիակատար հնչյունական ընդհանրության բերել Մաշտոցի վերականգնած հայ հին նշանագրերը Գողթան քրմերի ունեցած հին հայկական գրերի հետ՝ երկակի ընթերցումը բացառելու նպատակով: Ըստ երեւույթին, իր բերած հայերեն այբուբենով եւ անձնուրացությամբ Մաշտոցը շահել է Գողթան քրմերի պատկառանքը, եւ նրանք տրամադրել են իրենց հին բնագրերը, որոնց հետ բաղդատելով՝ Մաշտոցը կարող էր համոզվել, որ իր նշանագրերը լիովին համընկնում են հին հայկական տառանիշերի պատկերային ու հնչյունական համակարգին: Եվ այժմ միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու է Մաշտոցն իր նորագյուտ այբուբենը նախ եւ առաջ տանում հեռավոր Մարաց կողմերը: Այսպիսով, Մարաց կողմերում ավարտվում է գրաստեղծման փուլը, եւ այնուհետեւ Վաղարշապատում սկսվում է գրի գործադրման շարժումը. միայն այսպես ընկալելու դեպքում տեքստի շարունակությունը դառնում է լիովին տրամաբանական. «Ետ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել» (Կոր. [ԺԱ], էջ 54): Կորյունը, հարկավ, չէր կարող Մաշտոցին սրբացնող Վարքում ուղղակի հիշատակել նրա գաղտնի առնչությունները քրմերի հետ, որոնց նպատակն էր հայոց հին գիրն ի սպաս դնել հայ ժողովրդի եւ եկեղեցու շահերին, ինչպես հելլենական հեթանոս գիրը ծառայում էր հույն ուղղափառ եկեղեցուն:

Ինչպես ասվեց, հայոց նշանագրերը գտնելուց առաջ Մեսրոպն անձամբ կազմել էր հայոց լեզվի հնչյունային այբուբենը, որն արտացոլում էր IV դարի վերջի հայերեն կենդանի լեզվի զարգացման մակարդակը: Եվ, ուրեմն, հայոց հին գիրը վերականգնելով՝ նա ինքն է իր կազմած հնչյունային այբուբենի հիման վրա նշանակել հնչյուններ, անվանել եւ դասավորել նշանագրերը եւ ինքն էլ լրացրել պակասող տառանիշերը՝ «նշանակեալ, անվանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք» (Կոր. Ը, էջ 48): Վերջին արտահայտությամբ՝ «յօրինէր սիղոբայիւք կապօք»,Կորյունը դիտել է տալիս, որ Մաշտոցն իր նորագյուտ այբուբենը լրացրեց այն ձայնավոր տառանիշերով, որոնք եւ պակասում էին Դանիելի կազմած այբուբենում: Վրաց եւ աղվանից նշանագրերի ստեղծման կապակցությամբ Կորյունն այլեւս «սիղոբաներ-կապեր» չի հիշատակում, որովհետեւ նրանց համար ամբողջական այբուբեններ է ստեղծել:

Դանիելյան այբուբենի նշանագրերի թվի վերաբերյալ տարբեր տեղեկություններ են տալիս Անանիա Շիրակացին եւ նրանից օգտված Ասողիկը (29 տառ), Վարդան Արեւելցին (22 տառ), Կիրակոս Գանձակեցին (29 տառ) եւ այլք: Սակայն Դավիթ Անհաղթի անունով V դարից ավանդված հանելուկներում գտնում ենք մի թվաբանական հանելուկ՝ «չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան. այժմ եմ երիցս երկոտասան» *(Իմաստութիւն Դաւթի Քերթողի.- «Բազմավէպ», Վենետիկ, 1848, էջ 192: Զարմանք է շարժում, երբ հայոց գրերի 1600-ամյակի առթիվ կայացած միջազգային գիտաժողովում որոշ զեկուցողներ հայտարարում էին, իբր դանիելյան նշանագրերի թվի մասին հայ մատենագրության մեջ պահպանված ամենավաղ տեղեկությունը վերաբերում է XII-XIII դարերին):* Անկասկած, հեղինակը նկատի ունի հայոց այբուբենը, որն առաջ ուներ 24 տառ (2x12), իսկ այժմ՝ 36 (3x12): Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է դանիելյան եւ մեսրոպյան այբուբենների պարունակած տառերի քանակին: Դավիթ Անհաղթը ժամանակով ամենամոտն է գրերի գյուտին, ուրեմն եւ նրա տվյալներն ավելի մոտ են ճշմարտությանը, քան Շիրակացու եւ հաջորդների հաղորդածը: Ըստ այսմ, հայոց հին նշանագրերից այբուբեն կազմելիս Դանիել Ասորին բավարարվել էր միայն 24 տառով, իսկ մեսրոպյան այբուբենն ունի 36 տառ: Կնշանակի, Մեսրոպն ավելացրել է 12-ը՝ ոչ միայն 6 ձայնավոր (ա, ե, է, ը, ի, ո), այլեւ նոր բաղաձայն հնչյուններ՝ ելնելով իր կազմած հնչյունային նոր այբուբենից:

Հետազոտողներից շատերը, սկսած Ք. Պատկանյանից, ենթադրում են, թե դանիելյան նշանագրերը արամեական տառեր են եղել: Հր. Աճառյանը եւս գտնում է, որ դրանք եղել են արամեական (հին ասորական) գրեր, սակայն Դանիելն ու Մեսրոպը թյուրիմացաբար *արամեական* հասկացել են *արամյան* (իմա՝ հայկական): «Իմ կարծիքով,- գրում է նա,- ամբողջ թյուրիմացությունը, որին զոհ գնացին թե՛ Դանիելը եւ թե՛ Մեսրոպը, *արամեական*, հին ասորական եւ *արամյան* հայ բառերի շփոթությունից էր առաջանում, եւ նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ոչ արամեական հնացած տառեր»: Դժվար է համաձայնել մեծ լեզվաբանի այս տեսակետին: Նախ, ասորի եպիսկոպոսը, ինչպես եւ Մեսրոպը, չէին կարող գաղափար չունենալ *արամեական* գրի մասին, որով գրված էր ոչ միայն Թարգումը՝ եբրայական կտակարանի արամեերեն թարգմանությունը, այլեւ բուն եբրայական կտակարանի գրքերի մեծ մասը: Արամեերեն գիրն օգտագործվում էր նաեւ պահլավերենում: Նույնիսկ Կորյունն Ասորոց Միջագետքն անվանում է «կողմանք Արամի»: Եվ հետո, «Արամեան» բառը հայ մատենագրության մեջ առաջինը Խորենացին է գործածել 470-ական թվերին՝ «հայ, հայկական» իմաստով, ինչպես՝ «հինքն Արամազնեայց» (Ա. Ձ, էջ 27), «Արք Արամեանք» (Բ. ՂԲ, էջ 247), «Արամեան ազն» (Բ. ԻԹ, էջ 293): Սրան հակառակ, Ն. Ակինյանի կարծիքով՝ դանիելյան այբուբենը հույն եւ ասորի, թերեւս եւ այլ այբուբենների մի համադրություն է եղել՝ Աղձնիքի հայ բնակչությանը գրագիտության մերձեցնելու համար: Մի՞թե Սահակն ու Մեսրոպն այնքան միամիտ էին, որ հույն եւ ասորի տառերի խառնուրդն ընդունեին իբրեւ հայկական գրեր: Զավեշտական է, երբ մեր ժամանակի որոշ ուսումնասիրողներ իրենց թյուրամտությունները վերագրում են V դարի մեր մեծ լուսավորիչներին, որոնց մասին գերմանացի խոշոր հայագետ Յ. Մարկվարտը գրում է. «Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սահակն իրենց մտքի ուժով հայ ժողովրդին եկեղեցական ու ազգային ինքնագիտակցության զարթոնքի հասցրին, եւ այս ամենը համեմատում ենք այն դանդաղ պարգեւի հետ, որը ֆրանկ Պիպինը, քաղաքական ու եկեղեցական իշխանության բոլոր միջոցներն իր ձեռն ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին, տեսնում ենք, որ Պիպինը եւ նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են եղել մտքի այդ երկու հսկաների հանդեպ» (Յ. Մարկվարտ, նշվ. աշխ., էջ 125):

Ինչպես տեսանք, Մեսրոպն ամեն կերպ ձգտում էր հեթանոս ճարտասանների օգնությամբ նրանց մատյաններում գտնել հայոց հին գիրը եւ դրանով իսկ վերականգնել կապը հին հայոց գրավոր մշակույթի հետ: Այդ համառ որոնումները վկայում են նաեւ, որ հին հայերեն գիրը պետք է որ ուրիշներից շատ տարբեր լիներ իր ինքնատիպությամբ, - այն չէր կարող ո՛չ հունական լինել եւ ո՛չ արամեա-ասորական, այլապես որոնել-փնտրելու հարկ չէր լինի:

*Շարունակությունը՝ էջ 4*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ

## (1081-1105-1113)

*Սկիզբը՝ էջ 1*

Գող Վասիլից ոչ շատ վաղ՝ արշավանքներից մեկի ժամանակ, զոհվեց Ծովքի իշխան Ապիրատը: Երկար ժամանակ Ծովքի դղյակը նույնացվում էր Խարբերդի Ծովք լճի ամրոցի հետ, սակայն Կյուլեսերյանի հետազոտությունները ցույց տվեցին, որ նույնանում է Դլուքի կամ Տլուքի հետ: Սկզբում այն հայկական փոքրիկ իշխանություն էր, որը թերեւս հիմնադրել էր Մագիստրոսի փեսան, որի անունը պատմությունը չի պահպանել: Նրան հաջորդեց Ապիրատը՝ ավագ որդին: Նշանավոր եղան նաեւ Ապիրատի եղբայրներ Վահանը եւ Վասակը, որոնք իշխանությունը զենքի ուժով պաշտպանեցին թշնամիներից:

Ծովքի իշխանի չորրորդ զավակը՝ Գրիգորը, Եգիպտոսում ձեռնադրվեց եպիսկոպոս՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից: Ապիրատ իշխանի զավակներից էին վերը հիշատակված մանկահասակ Գրիգորը եւ Ներսեսը, որոնք որպես կաթողիկոսացու ներկայացվեցին Բարսեղ Անեցուն: Հարձակումը Ծովքի դեմ եւ պաշարումը ոչինչ չտվեցին, քանի որ ամրոցը խիստ անառիկ էր, սակայն մի հագարացի զինվոր նրան նետահարում է թունավոր նետով: Ապիրատը սպանում է իրեն նետահարողին, սակայն ինքն էլ մեռնում է թունավոր նետից եւ թաղվում հայրենական դամբարանում: Ապիրատի Գրիգոր եւ Ներսես որդիներին մենք դեռ հետագայում կանդրադառնանք. այժմ լոկ նշենք, որ նրա Վասիլ եւ Շահան զավակները զինվորական դարձան, սակայն նրանց զավակներ Տղա եւ Ապիրատ Գրիգորյանները կաթողիկոսացան: Պատմությունը ոչինչ չի ասում, թե Ծովքի իշխանությունում ով հաջորդեց Ապիրատ իշխանին:

562 թվի տրե ամսի 5-ին կամ 1113 թվի մայիսի 26-ին մահացավ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսը: Նա անիմաստ դժբախտ արկածի զոհ դարձավ: Կաթողիկոսը մինչ այդ քահանա էր ձեռնադրել Գրիգորին: Վարդավառի տոնին, այսինքն՝ հուլիսի 13-ին, նրան եպիսկոպոսության պատիվ շնորհելու համար Բարսեղ Անեցին գալիս է Քեսունի կամ Բեհեսնիի մոտ գտնվող Վարդահեր գյուղը: Եվ երբ նա տանիքի վրա աղոթում էր հոգեւորականների հետ միասին, տանիքը փլվում է, եւ հայոց հայրապետը՝ զոհվում: Մեկ այլ տեղեկությամբ՝ այդ դժբախտ պատահարը տեղի ունեցավ



Շուղրի կամ Կարմիր վանքում: Թերեւս տեղեկությունների որոշ հակասականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վարդահեր գյուղը հեռու չէր Կարմիր վանքից: Կործանված տանը, բացի կաթողիկոսից, որեւէ այլ անձ չտուժեց: Վախենալով, որ մինչեւ Վարդավառ կենդանի չի մնա՝ նա առանց հապաղելու եպիսկոպոս է ձեռնադրում Գրիգորին: Պատահարից հետո տարբեր պատմիչներ օրերի տարբեր քանակ են ներկայացնում մինչեւ Բարսեղի մահը՝ 3,5 եւ անգամ 7 օր: Դեպքը տեղի ունեցավ հինանց երրորդ շաբաթին, եւ Բարսեղի մարմինը հողին հանձնվեց Շուղրի Կարմիր վանքում:

Բարսեղ Ա Անեցին հովվապետեց Գրիգոր Ա Վկայասեր կաթողիկոսի օրոք 32 տարի եւ հայոց միակ կաթողիկոսը դարձավ 8 տարի: Նա պատահարի զոհ դարձավ հավանաբար 60 կամ առավելագույնը 68 տարեկանից մի փոքր ավելի տարիքում: Գիտական եւ ուսումնական արժանիքները հավանաբար շատ էլ մեծ չէին, քանի որ իրեն հեռու էր պահում Անիի գրական շրջանակներից, եւ շատ հավանական է, որ սկզբում պարզապես զինվորական է եղել: Կաթողիկոս դառնալով՝ նա ի հայտ բերեց կազմակերպչական անուրանալի հատկանիշներ: Նա եղավ Հայոց եկեղեցու մեծ պաշտպան օտարազգիների ծանր իշխանության շրջանում: Նրան հաջողվեց ձեռք բերել մելիքշահի բարեհաճ վերաբերմունքը եւ ստանալ ազատություններ հայ ժողովրդի եւ եկեղեցու համար: Բարձր է գնահատել նրա դերը Հայոց եկեղեցու պատմության մեջ Ներսես Շնորհալին եւ սգացել նրա մահը:

Բարսեղ Ա Անեցու կաթողիկոսության շրջանում նշանավոր հոգեւորականներից էր Գեւորգ վարդապետը՝ Վասպուրականի Անայուր գյուղից, որը ստացել էր Մեղրիկ մականունը: Նա նորոգեց ու պայծառացրեց Դրազարկի վանքը: Մեղրիկը հիշվում է իր եկեղեցական բարեկարգություններով եւ ճաշոցի կարգավորմամբ եւ հատկապես կրոնավորական կանոնների հեղինակությամբ: Նա վախճանվեց 70 տարեկան հասակում՝ 50 տարվա խստակրոն կյանքից հետո: Նրա մահն ընկնում է հավանաբար 1115 թվի փետրվարի 9-ին կամ հրոտից ամսի 24-ին: Նշանավոր եղավ Մարկոս Մոկացին, որը սկզբում ճգնավորեց իր գավառի Կոհգանակ լեռան վրա, իսկ այնուհետեւ՝ Մարաշի Կոնկըռնաթ լեռան վրա: Աղբյուրների համաձայն՝ նա կանխագուշակել էր Երուսաղեմի թագավորության անկումը եւ մահանալով 1105 թվականին՝ թաղվել է Վահկա ամրոցի մոտ գտնվող Կաստաղոնի վանքում: Հիշատակվում է Երեմիա Անձրեւիկը, որը 30 տարի ջրակեր է ապրել եւ տարիներով լուռ մնացել: Նշանավոր էին Պետրոս Խանթկայորդին եւ Հակոբ Սքանչելին, որոնք հռչակվեցին իրենց ճգնավորությամբ: Կանանցից հռչակվեցին թագավորազուն Խորասուն եւ Մարիամը, որոնք հաստատվել էին Քոբայրի վանքում եւ առաջնորդվում էին Հովհաննես Սարկավագի խրատներով: Նշանավոր ծաղկողներից էին Վկայասեր կաթողիկոսի աշակերտներ Կիրակոս եւ Մատթեոս թարգմանիչ վարդապետները, Սիսիանոս Սեբաստացին, Գրիգոր եւ Հովհաննես Անեցիները, Սարգիս Կունդը, Գրիգոր Իմաստասերը եւ Կիրակոս Դրազարկեցին, որը թերեւս Կուրոս Դրազարկեցին է՝ հռչակված իբր կանոնագիր:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

*Սկիզբը՝ թիվ 9-12*

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



*Գործ՝ Ս. Մուրադյանի*

**4.**

Հայաստանի գրականագետներից ոմանք առաջներում բանաստեղծներին բաժանում էին երկու խմբի՝ հուզական եւ դատողական, եւ Պ. Սեւակին էլ դասում էին դատողական բանաստեղծների շարքը: Արհեստական ու քռնազբոսիկ այս բաժանումը Պ. Սեւակի համար ոչ միայն ընդունելի չէր, այլեւ վրդովեցուցիչ էր, որովհետեւ նա իր բանաստեղծությամբ մարտահրավեր էր նետել հենց կեղծ հուզականությանն ու հեքիաթա-նաղլականությանը: Նամակի նման՝ ավելորդ մանրամասնություններ պարունակող բանաստեղծությունը նոր ժամանակներում նա համարում էր հնացած, իսկ «նոր» բանաստեղծությունը, նրա համոզմամբ, իր բնույթով պիտի լիներ հեռագրի նման, այսինքն՝ ավելորդություններից զերծ, կարճ ու դիպուկ, կես խոսքից հասկանալի: Բայց սրա հետ միասին առաջադրում էր նաեւ սիմֆոնիզմի կամ համանվագայնության խնդիրը, որով պիտի չեզոքանային միագիծ պարզունակությունն ու կենսական աղքատությունը, ասելիքը բխեր կյանքից ու նրա բանաստեղծական ընկալումից, իսկ բանաստեղծական պատկերը լիներ ընդգրկուն ու բազմաշերտ, խելքը չբացարձակացվեր ու չվերածվեր տրամախոսության ու ճառաքանության: Այսպես պիտի իրականացվեր առօրեականի, անբանաստեղծականի պոետականացման, մտքի եւ հույզի ներդաշնակ պատկերման ծրագիրը: Իրեն միայն «դատողական» բանաստեղծ համարողներին նա հակադրվում էր՝ իր մի բանաստեղծությունը վկայակոչելով.

*Ես հոգնել եմ, այո՛,*
*Ես աչքերս եմ փակում:*
*Տիկնիկն էլ է հոգնում, երբ ետեւից բեմի*
*Ինչ-որ թելեր նրան ստիպում են ապրել.*
*Այդ ապրե՞լ է կոչվում, ի՜նչ իմանամ...*

Սա դատողական հո՞ւյզ է, թե՞ հուզական դատողություն. այստեղ մտքի՞ գերակշռությանն է զգալի, թե՞ զգացմունքի. որակումը չէ կարեւորը, այլ այն, որ իրականում ճիշտ այդպես էր ապրում խորհրդային ժամանակների մարդը՝ ենթարկվելով մարմնի տարբեր մասերը բեմի ետեւից ձգող անտեսանելի թելերի ամենազոր իշխանությանը, եւ արդարացի էր բանաստեղծի զայրույթը. «Սա՞ է դատողական... Բա դա քննադա՞տ է, չի էլ պատկերացնում, թե էս խեղճ Պարույր Սեւակը ինչքա՜ն տառապած պիտի լինի այսպիսի տողեր գրելու համար...»:

Ավելին. հանուն ազգային օրախնդիր հարցերը բացախոսությամբ հնչեցնելու՝ երբեմն իր «կոչկի հետ խոսող», անգամ կամավոր խեղկատակի ու ծաղրածուի դեր ստանձնած դյուրավառ արյամբ բանաստեղծը, որն իրեն անվանում էր «եկած ապագա, վառվող արյուն, ապրող հիշողություն կամ քայլող պատմություն», «Եղիցի լույս» գրքում ոչ միայն մեր ազգային ցավն էր բանաստեղծում «սարքովի ճշմարտության» փոխարեն, այլեւ խորհրդային կայսերապետության մեջ ապրող բոլոր ժողովուրդների ու համայն աշխարհի մարդկության ցավը: Նրա կռիվը գերտերություններ ի դեմ էր, մանավանդ խորհրդային գերտերության: Այն պետությունը եւ մանավանդ այն ժամանակը, որի մեջ ապրում եւ ստեղծագործում էր Պ. Սեւակը, ընդամենը մեկ տասնամյակ հետո նույն այդ պետության ղեկավարների կողմից պիտի կոչվեր «լճացման դարաշրջան», եւ նրանք էլ պիտի վճռական միջոցներ ձեռնարկեին վերակառուցման՝ պերեստրոյկայի համար, իսկ այդ միջոցների գործադրումն էլ ի վերջո հանգեցրեց կայսերապետության ջլատմանն ու վերջնական փլուզմանը:

Իսկ բանաստեղծն ավելի շուտ՝ տասնամյակներ առաջ էր զգացել ու նկատել փլուզման գործընթացը, անգամ գիտեր դրա ողջ պատճառահետեւանքային համակարգը, ուստի ահազանգում - զգուշացնում էր վերեւից ներքեւ ու ներքեւից վերեւ: Երկնքում չկան աստվածներ, իսկ երկրի վրա բազմած հողեղեն աստվածները, որ խորհրդային ղեկավարներն էին, մարդկանց հոգիներում ոտնագնդակ էին խաղում ու նրանց կոկորդում թխմվել էին իբրեւ խորխ, որից շուտափույթ ազատվել էր պետք շնչել կարողանալու համար: Այս իրավիճակից փրկվելն անկարելի էր դարձել, որովհետեւ այդ հողեղեն աստվածները դարձել էին անտանելի մի բեռ՝ ուղտի համբերությամբ դիմացող այն ժողովրդի ուսերին, որը, համբերության բոլոր պաշարները սպառած, հասել էր բեռը թոթափելու գիտակցության: Հենց այդ բեռաստվածներն էլ հյուսել էին համառորեն չպատռվող այն ցանցը, որի մեջ թպրտում էր իրավազուրկ ու հպատակ մարդն ու մարդկությունը.

*Եվ մեր լեզվից կախ են տվել կեռերով*
*Անվերջ նեխող, բայց չփտող մի դիակ...*

Պատկերն ավելի ըմբռնելի կդառնա, եթե հիշենք, որ «Եղիցի լույսը» լույս էր տեսնում համայնավարների կուռքի 100-ամյակի տոնակատարության օրերին, իսկ Ռուսաստանում թեեւ այժմ արդեն մերկացրել ու բացահայտել են երկիրը քանդող այդ օտարերկրյա գործակալի իրական դեմքն ու էությունը, բայց մինչեւ օրս էլ վիճում են, թե ինչ անեն Կրեմլի հարեւանությամբ կառուցված դամբարանում պահվող անթաղ դիակը, որ կեռերով կախված էր խորհրդային մարդկանց լեզվից: Նույն Կրեմլից էին տարածվում խորհրդային երկիրը կառավարող բոլոր հրահանգները, նրա պալատներում էին հնչում մեղալներն ու շքանշանները իրենց կրծքերի վրա տողադարձած ապրող կուռքերի ու քաղաքական դիակների համագումարային ճառերը: Իսկ այս ճշմարտությունն իրոք անկարելի էր ասել բաց տեքստով, ուստի բանաստեղծը, որ իրեն նաեւ Աստծու քարտուղար էր համարում, դեռ հին աշխարհից հայտնի խոսքի այն եղանակն էր ընտրել, որով ծաղրածուներն ու խեղկատակներն էին ճշմարտությունն ասում արքաների երեսին.

*- Որտե՞ղ են ապրում քամիները:*
*- Պալատների մեջ:*
*Եվ, անշո՛ւշտ, մեր ռունգներում:*

*- Որտե՞ղ է մեռնում լռությունը:*
*- Քարոզների մեջ:*
*Եվ բռնադատված մեր իսկ ունկերում:*

*- Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք:*
*- Մեր հին թշնամու երունգների տակ,*
*Մկրատի՜ կարոտ կեռ եղունգներում:*
*- Որտե՞ղ են մեռնում բոլոր կուռքերը:*
*- Ծափ ու ծնծղայի ծանրության ներքո,*
*Նաեւ խունկերում:*

*- Իսկ զորանում է մեր խելքը որտե՞ղ:*
*- Ո՛չ մեր գանգում,*
*Այլ մեր վերքերո՜ւմ:*

*- Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը:*
*- Մե՛ր,*
*Եվ, ավա՜ղ, ո՛չ մեր ձեռքերում...*

«Մարդը ափի մեջ» ժողովածուի զննումներն ու բացահայտումներն ավելի էին ուժգնացել «Եղիցի լույս» գրքում: Բայց դրանցով պարզվում էր, որ «հացի փոխարեն մութ կուլ տված» մարդը նաեւ անցանկալի ստվերներով ու խավարով էր շրջապատված.

*Եվ իսկապես էլ՝ մեր թիկունքն է մութ,*
*Անցյալը գիտենք գրքերով միայն:*
*Գուցե առավել մեր ճակատն է մութ.*
*Գրքերն են ճառում գալիքից նաեւ:*
*Մո՜ւթը առջեւից - մո՜ւթը ետեւից,*
*Մենք՝ երկու մթան նեղլիկ արանքում,*
*Էլ ի՞նչ է մնում, որ էլ ի՞նչ անենք, -*

բանաձեւում էր բանաստեղծը: Այդ հուսահատեցնող ու հեղձուցիչ մութը, անորոշությունը միայն լույսով էր հնարավոր հերքել ու ցրել. ահա ինչու «խավար ու ստվեր պոզահարող» մեծ լուսերգուն իր, ավա՜ղ, վերջին ժողովածուն կոչեց «Եղիցի լույս»:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



*Սկիզբը՝ էջ 3*

Օտար հնագրագետների կողմից հատկապես ընդգծվում է մաշտոցյան գրի գծագրական ինքնատիպությունը եւ հայոց լեզվի հնչյունային համակարգը լիարժեք արտահայտելու հատկությունը: «Հայոց այբուբենի տառային-հնչյունային կազմը,- գրում է Վ. Ա. Իստրինը,- Մաշտոցը կառուցել է հայոց լեզվի հնչյունաբանության խոր գիտական վերլուծության հիման վրա, որ շատ ճշգրիտ եւ լրիվ է արտացոլում նրա այբուբենը: Մաշտոցի ստեղծած տառերի գծագրությունը սոսկ հեռավոր կերպով է հիշեցնում հունական եւ ասորա-արամեական գիրը, բայց դրա փոխարեն սերտ օրգանական կապի մեջ է գտնվում հայկական ժողովրդական զարդանախշերի հետ» (В. А. Истрин. Возникновение и развитие письма, стр. 356):

Ինչպես վկայում է Ագաթանգեղոսի Պատմությունը (§ 499 եւ հաջ.), Սահակը եւ Մեսրոպը հանճարեղորեն օգտագործեցին Պենտեկոստեի հրաշքը՝ Աստվածաշունչը հայերեն թարգմանելու իրավունքը նվաճելու համար, երբ Երուսաղեմի վերնատանը ժողովված առաքյալների վրա իջան կրակի լեզուներ, եւ նրանք սկսեցին խոսել տարբեր ազգերի լեզուներով: Հիսուսը 72 առաքյալ ուղարկեց ընդ ամենայն տիեզերս՝ 72 բաժանված ազգերի լեզուներով իր Ավետարանը քարոզելու: Նույնպիսի աստվածային տեսիլքով էլ Մեսրոպ Մաշտոցին շնորհվեց հայոց հին գիրը, որը նա նորոգեց եւ վերածնեց իր սուրբ աջով:

Ուսումնասիրողների մի ստվար խումբ՝ հայազգի եւ օտար, որոնք կտրականապես մերժում են նախամաշտոցյան հայոց գրի եւ դպրության գաղափարը, ի վերջո հարկադրված են պնդել, թե Մաշտոցը հայերեն այբուբենը ստեղծել է հիմնականում հունարեն տառերի ձեւափոխման միջոցով՝ այսինքն հայոց այբուբենի հիմքում դնում են հունարեն գիրը՝ առնվազն 20 եւ ավելի տառանշան (Լագարդ, Լեպսիուս, Հ. Հյուբշման, Գարդտհաուզեն, Ս. Վեբեր, Գ. Մենեիշյան, Հ. Աճառյան, Է. Աղայան, Ա. Աբրահամյան) (Այս կարծիքների մասին տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 504-508; **Ա. Աբրահամյան**, Հայոց գիր եւ գրչություն, Երեւան, 1973, էջ 46-49): Այստեղ տեղին է բերել գերմանացի խոշոր հայագետ Յ. Մարկվարտի վճռական առարկությունը՝ ուղղված հայոց այբուբենի հունական ծագման վերաբերյալ վարկածների դեմ. «Եթե Մաշտոցը Դանիելի նշանագրերի փոխարեն հիմք ընդունած լիներ հունական այբուբենը՝ ապա երկաթագրերի վրա զգված առաջին իսկ հայացքից կերեւար հայկական այբուբենի հունական ծագումը, մի բան, որ առկա չէ: Այս պատճառով էլ մեր հիմնական ուշադրությունը կենտրոնանում է Դանիել եպիսկոպոսի այբուբենի վրա» (**Յ. Մարկվարտ**, նշվ. աշխ., էջ 162): Դրան հակառակ մի ուրիշ խմբի կարծիքով էլ Մաշտոցը հիմնականում օգտվել է փյունիկյան (քամական) կամ արամեական (ասորա-սեմական) այբուբեններից (Ի. Հարությունյան, Ն. Տաղավարյան, Ֆր. Մյուլլեր, Գարագաշյան, Գ. Սեւակ, Ա. Փերիխանյան): Յ. Մարկվարտը լուրջ առարկություններ ունի նաեւ այն ուսումնասիրողների դեմ, որոնք մաշտոցյան այբուբենի ատաղձը ասորա-սեմական էին համարում. «Արդեն 400 թվականին ասորական շատ նշանագրեր այնքան նոտրագիր էին դարձել, որ հաճախ իրարից հազիվ էին տարբերվում: Մյուս կողմից՝ սակավաթիվ տառեր ունեցող մի միջին իրանական այբուբեն չէր կարող հիմք ծառայել հնչյուններով այնքան հարուստ հայերենի այբուբենի համար: Այդ այբուբենները բոլորն էլ այն մեծ թերությունն ունեին, որ բազմաթիվ տառեր համընկնում էին իրար հետ, մի երեւույթ, որը իր առաջընթացն ապրեց ակնհայտորեն սասանյան ժամանակներում: Եթե այս այբուբենները – նույնիսկ հաշվի չառած ձայնավոր նշանների նրանց պակասը – ի վիճակի չէին ամբողջովին եւ որոշակի ներկայացնելու իրանական հնչյունական համակարգը՝ ապա բնականաբար նրանցից որեւէ մեկն ավելի պակաս ընդունակ պետք է լիներ հիմք հանդիսանալու անհամեմատ ավելի հարուստ եւ բազմաբղետ հնչյունական համակարգ ունեցող հայերենի այբուբենի համար» (նույն տեղում, էջ 176-177): Իր հերթին մաշտոցյան այբուբենը համեմատելով հունարեն, ասորերեն, պահլավերեն այբուբենների հետ՝ Յ. Մարկվարտը գտնում է, որ հայերեն 36 տառից 15-ը ծագել է պահլավերենից, 7-ը՝ հունարենից, 6-ը՝ ասորականից եւ այլն (նույն տեղում, էջ 166-176): Արդեն մեր օրերում՝ 1960-ական թվերին, Ա. Փերիխանյանն առաջ քաշեց մի նոր վարկած, ըստ որի V դարի վերջից ավանդված հայերեն երկաթագրերը պետք է ծագած լինեն հյուսիսմիջագետքյան արամեական գրի մի տեսակից (А. Г. Периханян. К вопросу о происхождении армянской письменности — “Переднеазиатский сборник”, II, Москва, 1966, стр. 103-133), որը դեռեւս անհայտ է: Իսկ ուսումնասիրողներից ովքեր էլ ընդունում են հայոց հին գրականության գաղափարը, նրանք էլ բացառում են հայերեն հին այբուբենի գոյությունը՝ ենթադրելով, որ հայերեն նախաքրիստոնեական գրականություն կարող էր գոյություն ունենալ միայն արամեական գրով:

*Շարունակելի*

***Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր***

# ՎԱՐԱԳԱՎԱՆՔ

## Վարագավանքը որպես Վասպուրականի հոգեւոր-մշակութային կենտրոն

Վարագավանքը գտնվում է Վան քաղաքից հարավ-արեւելք՝ Վարագ լեռան արեւմտյան լանջին: Այն եղել է նշանավոր կրոնական, կրթամշակութային կենտրոն: Ըստ ավանդության՝ ս. Հռիփսիմեն իր մոտ ուներ Քրիստոսի խաչափայտից մի մասունք: Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից խուսափելով՝ Հռիփսիմյաց կույսերն ապաստանում են Հայաստանում եւ մինչ Վաղարշապատ ուղեւորվելը՝ իջեւանում Վարագա լեռան մոտ՝ այնտեղ թաքցնելով սուրբ մասունքը: 7-րդ դ. Թոդիկ անունով մի ճգնավոր իր աշակերտ Հովելի հետ գնում է Վարագալեռ, եւ մարդասերն Աստված մի լուսե տեսիլքով նրան է հայտնում մասունքի տեղը: Դրանից հետո կաթողիկոս Ներսես 3-րդ Տայեցին լեռան վրա կառուցում է Ս. Նշան եկեղեցին եւ հաստատում Վարագա Ս. Խաչի տոնը: Հետագայում վանքի կառույցների թիվն ավելանում է. այն բաղկացած է ներքին (Ս. Աստվածածին, Ս. Գեւորգ, Ս. Նշան, Ս. Խաչ, Ս. Սիոն, Ս. Հովհաննես, Ս. Սոֆյա) եւ վերին (Ս. Փրկիչ, Ս. Աստվածածին, Ս. Հռիփսիմյանց), նաեւ Ս. Գրիգոր եւ Ս. Կարմրավոր եկեղեցիներից. վանքից փոքր-ինչ բարձր կա մի քարայր, ուր, ըստ ավանդության, ճգնել են Թոդիկը եւ նրա աշակերտ Հովելը: Վարագավանքը հայերի, հատկապես՝ վանեցիների համար եղել է նշանավոր ուխտավայր, եւ վանքի տոնի օրը համարվել է փետրվարի 28-ը: Վարագավանքը եղել է եպիսկոպոսանիստ. նշանավոր է հատկապես Անանիա եպիսկոպոսը (հետագայում՝ Անանիա Ա Մոկացի Ամենայն հայոց կաթողիկոս (946-968):

Վանքը ծանր պատմություն է ունեցել. այն բազմիցս կողոպտվել է, ավերվել: 870 թ. արաբները գրավել են Վարագա վանքը, սակայն շատ չանցած՝ իշխան Աշոտ Արծրունին ազատագրել է այն: 10-րդ դ. սկզբին վանքը ծաղկում է ապրում. սկիզբ է դրվում գրչական, շինարարական գործունեության: 922 թ. Վասպուրականի արքա Գագիկ Արծրունու կինը՝ Մլքեն, վանքին նվիրում է մի ձեռագիր Ավետարան՝ գրված 851 թ.: 981 թ., ըստ արձանագրության, Վասպուրականի Սենեքերիմ թագավորի կին եւ Գագիկ Բագրատունու դուստր Խուշուշը կառուցում է Ս. Սոֆյա եկեղեցին:



Ժամանակ առ ժամանակ ս. խաչափայտի մասունքը տարվել է այլ վայրեր՝ թշնամիներից պահելու համար: 1021 թ.՝ Վասպուրականը Բյուզանդիային բռնակցվելուց հետո, Սենեքերիմ-Հովհաննես արքան Վարագա սուրբ խաչը տարել է Սեբաստիա, որտեղ նրա որդի Ատոմը 1022 թ. հիմնել է Ս. Նշան վանքը: 1025 թ., երբ վախճանվում է Սենեքերիմ-Հովհաննեսը, նրա որդին աճյունը Սեբաստիայից տեղափոխում է Վարագա վանք՝ միաժամանակ վանքին վերադարձնելով Վարագա սուրբ խաչը: Սակայն 1237 թ. Վարագավանքի վանահայր Ղուկասը, թշնամիների ասպատակությունից խուսափելով, Վարագա սուրբ խաչը տանում է Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության Անապատ վանքը, որն է վերանվանվում է Նոր Վարագավանք: 14-րդ դ. վանքը ենթարկվել է թաթար-մոնղոլների ասպատակություններին, որոնք նաեւ ծանր հարկեր են դրել վանքի վրա, սակայն կաթողիկոս Զաքարիան գնացել է Խանի մոտ եւ ազատել վանքը հարկերից: Կաթողիկոսի մահից հետո վանականների վիճակը կրկին ծանրանում է: 16-17-րդ դդ. վանքը տուժել է պարսիկների հալածանքներից, հետագա դարերում՝ թուրքերի: Թշնամիները թալանում էին վանքի հարստությունները, սպանում վանականներին, այրում ձեռագրերը, քանդում եկեղեցիներն ու վանքապատկան շինությունները: Այս բռնությունները շարունակվել են նաեւ հետագա դարերում:

1857 թ. այստեղ իր գործունեությունն է սկսել նշանավոր Խրիմյան Հայրիկը՝ իբրեւ վանահայր, որի մեծ ջանքերով վանքը հանվել է Վանի առաջնորդների իրավասությունից, ազատվել իշխանությունների շահատակությունից եւ դարձել անկախ: Խրիմյան Հայրիկը բացել է տպարան եւ շարունակել «Արծվի Վասպուրական» շաբաթաթերթի հրատարակությունը, հիմնել է ժառանգավորաց դպրոց, որտեղ դասավանդել են եվրոպական կրթություն ստացած ուսուցիչներ: Ժառանգավորաց դպրոցը եղել է նոր տիպի կրթական օջախ. այստեղ վերացվել են մարմնական պատիժներն աշակերտների նկատմամբ: Այստեղ դասավանդել են կրոնի պատմություն, աստվածաբանություն, երաժշտություն, ճարտասանություն, քերականություն, աշխարհագրություն, հայոց պատմություն եւ հայրենասիրություն: Այս դպրոցում ժամանակին ուսուցիչ է եղել նաեւ հայ մեծանուն գրող Րաֆֆին:

Վանքում զարգացել են գրչագրությունը, մանրանկարչությունը, մատենագրությունը, տաղասացությունը եւն: Վարագավանքն ունեցել է բավականին մեծ գրչատուն, որտեղ ընդօրինակվել եւ պահվել են բավականին մեծ թվով ձեռագրեր: Ցավոք, հայ մշակույթի այդ գոհարներից շատ քչերն են մեզ հասել: Սակայն նրանից յուրաքանչյուրն ունի անգնահատելի եւ անփոխարինելի արժեք: Օրինակ՝ 1251 թ. Վարագավանքում գրված մի Ավետարանի ընդարձակ հիշատակարանը մեզ իրազեկում է սուրբ խաչափայտի պատմությունը, Հռիփսիմյաց կույսերի կողմից նրա մի մասունքը Վարագում պահելու եւ վանքի կառուցման մասին, արձանագրում է եկեղեցիների թիվն ու նրանց պատմությունը (Լալայանց Ե., Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 87-92, Թիֆլիս, 1915):

1869 թ. Վարագա վանքը կողոպտվել է, վարժարանի ուսուցիչների եւ աշակերտների մեծ մասը սպանվել, բազում մատյաններ այրվել: Վարագավանքի մասին վերջին տեղեկությունը պատկանում է Հովհաննես վրդ. Հյուսյանի գրչին: 1915 թ. լինելով Վարագավանքում՝ նա գրում է, որ այն Լիմ անապատի պես կիսավեր եւ թալանված վիճակում էր: Սակայն թշնամու աչքից վրիպել էր մի պահարան՝ 345 ձեռագրերով: Այսօր նրանք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում եւ պատմում Վարագա վանքի երբեմնի փառահեղ պատմության մասին:

1915 թ. թուրքերի կողմից իրականացված բարբարոսությունները իրենց ազդեցությունը թողեցին այս փոքրիկ, բայց մեծ օջախի ճակատագրի վրա: Վարագա վանքը մինչեւ վերջ պայքարել է թշնամու դեմ. եղեռնի ժամանակ այստեղ փակել են մի խումբ խիզախ վանեցիների եւ այրել:

Եղեռնից հետո Վարագավանքը լքվել է:

Այսօր վանքը, թեեւ ավերակ, բայց ներշնչում է ցանկացած ուխտավորի: Վան քաղաքից 8 կմ հեռավորության վրա գտնվող վանքի միայն եռակամար մուտքն է կանգուն, որտեղից մտնում են գավիթ՝ իր երկու սրահներով եւ հարակից որոշ կառույցներ: Շրջակայքը բնակեցված է քրդերով, որոնք երջանկահիշատակ Մեսրոպ Աշճյանի ջանքերով այսօր դադարեցրել են վանքի քարերի գողությունը:

Կարելի է տեսնել հրդեհի հետքերը: Վանքում պահպանված են որմնանկարները, որոնք մեծամասամբ հիմնական սյուների վրա են: Կենտրոնական մուտքի վերեւում կա մի արձանագրություն: Մուտքի աջ եւ ձախ կողմերում՝ պատի վրա, հորիզոնական ձգվում է հստակ տեսանելի խաչքարերի շարանը: Գավթին հաջորդող սրահում պահպանվել է մի գեղեցիկ խաչքար: Որոշ տեղեկությունների համաձայն՝ այն տեղափոխվել է մուտքի ձախ կողմում գտնվող սրահից, ուր, ըստ ավանդության, թաղված է եղել Սենեքերիմ արքայի կինը՝ Խուշուշը:

Խոնարհված է Վարագավանքը՝ կարոտ շարականների: Հուսանք, որ մի օր այստեղ պիտի կրկին լսվեն մեր քաղցրահունչ հոգեւոր մեղեդիները:

*«Զվարագն ասեմ զրաղձալին,*
*Զհրեշտակաց փափագելին,*
*Ուր խաչափայտն էր Քրիստոսին,*
*զոր բերեալ էր կոյսն Հռիփսիմին»:*
(«Արծվի Վասպուրական»-ից)

***Նարեկ ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆ***
***ԵՊՀ Աստվածաբանության***
***ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող***

**ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱԵՎ**

# ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 11-12*

Անձնավորությունը կենսաբանական եւ կամ հոգեբանական կատեգորիա չէ, այլ՝ բարոյական եւ հոգեւոր:

Նրան չի կարելի նույնացնել հոգու հետ:

Անձնավորությունն ունի տարերային-անգիտակցական հենք: Մարդը ենթագիտակցորեն սուզված է նախակյանքի մոլեգնող օվկիանոսում եւ բանապաշտված *(ռացիոնալիզացիա - լատ. rationalis - բանական - ուսմունք իմացաբանության մեջ, ըստ որի՝ համընդհանրությունն ու անհրաժեշտությունը՝ հավաստի գիտելիքների տրամաբանական հատկանիշները չեն կարող բխեցվել փորձից եւ նրա ընդհանրացումներից, դրանք կարող են վերցվել միայն բուն մտքից եւ կամ մտքի բնածին հասկացություններից, կամ էլ այն հասկացություններից, որոնք գոյություն ունեն միայն որպես մտքի տվյալներ, կանխահակումներ)* է միայն մասնակիորեն: Անհրաժեշտ է մարդու մեջ առանձնացնել խորքային եւ մակերեսային «եսը»: Մարդը շատ հաճախ է դիմում ուրիշ մարդկանց, հանրության ու քաղաքակրթության իր մակերեսային «ես»-ով, որն ընդունակ է հարաբերվելու, բայց ոչ հաղորդակցվելու: Սա շատ լավ հասկանում էր Լեւ Տոլստոյը, ով մշտապես պատկերում էր մարդկանց երկակի կյանքը՝ արտաքին-պայմանականը, այսինքն՝ կեղծիքներով լի ոչ իրական կյանքը, որով մարդը ներկայանում էր հանրությանը, պետությանը, քաղաքակրթությանը, եւ ներքին՝ ճշմարիտ կյանքը, երբ մարդը կանգնած է նախաիրականության, կյանքի խորքայնության առջեւ: Երբ իշխան Անդրեյը նայում է աստղազարդ երկնքին, ավելի իրական կյանք էր, քան երբ խոսում էր պետերբուրգյան սալոնում: Մարդու մակերեսային «եսը» շատ է սոցիալականացված, բանապաշտված, սակայն մարդու մեջ կա նաեւ անձնավորությունը, որը նույնիսկ կարող է մարդու խեղված կերպարը լինել՝ քողարկված անձնավորության տակ: Մարդու անձնավորությունը կարող է լինել ճնշված, մարդը կարող է ունենալ բազում դեմքեր, եւ նրա կերպարը կարող է անորսալի լինել: Մարդը կյանքում հաճախ է դերեր խաղում եւ կարող է խաղալ ոչ իր դերը: Անձնավորության երկթեւությունն ամենից շատ հաղթանակում է նախամարդու մեջ եւ կամ՝ հոգեկան հիվանդի: Քիչ թե շատ նորմալ, քաղաքակրթված մարդու երկթեւությունն ունենում է այլ բնույթ. այն քաղաքակրթության պայմաններին հարմարվելով՝ ձեռք է բերում նորմատիվ բնույթ, եւ որպես ինքնապաշտպանություն, մարդը դիմում է ստի անհրաժեշտությանը: Սոցիալական խստավարժեցումը եւ մարդ-բարբարոսին քաղաքակրթելը կարող են դրական նշանակություն ունենալ, բայց դա ամենեւին չի նշանակում անձնավորության ձեւավորում: Միանգամայն սոցիալականացված եւ քաղաքակրթված մարդը կարող է բոլորովին անդեմ լինել, կարող է լինել ճորտ՝ չնկատելով դա: Անձնավորությունը հանրության մասնիկը չէ, ինչպես եւ տոհմի մասնիկը չէ: Մարդու խնդիրը, այսինքն՝ անձնավորության խնդիրը հանրության նախնական խնդիրն է: Թյուր են մարդու մասին սոցիոլոգիական բոլոր ուսմունքները. նրանք գիտեն միայն մարդու առարկայացված մակերեսային շերտը: Սոցիոլոգիական տեսանկյունից, թե իբր անձնավորությունը հանրությանը պատկան մասնիկ է, միայն արտաքուստ է եւ, ի դեպ, այն էլ շատ փոքրիկ մասնիկը՝ հանրության զանգվածի համեմատությամբ: Սակայն մարդ-անձնավորության մասին ճշմարիտ ուսմունքը կարող է ստեղծել միայն էկզիստենցիալ փիլիսոփայությունը եւ ոչ թե սոցիոլոգիական, ինչպես եւ կենսաբանական փիլիսոփայությունը: Անձնավորությունը սուբյեկտ է եւ ոչ թե օբյեկտ՝ օբյեկտների մեջ եւ հիմնավորված է գոյության ներքին պլանում,



***Ե. Քոչար. Երկփեղկված անհատը***

այսինքն՝ հոգեւոր, ազատության աշխարհում:

... Անձնավորությունը՝ որպես էկզիստենցիալ կենտրոն, ենթադրում է տառապանքների եւ ուրախությունների զգայարան: Օբեկտների աշխարհում նման ոչինչ չկա. չկա ո՛չ ազգ, ո՛չ պետություն, ո՛չ հանրություն, ո՛չ սոցիալական ինստիտուտ, ո՛չ եկեղեցի. նման զգացումներ չկան:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



Գործ՝ Ս. Մուրադյանի

Սկիզբը՝ էջ 4

Պ. Սեւակը, որ բանաստեղծության համանվագայնության կամ սիմֆոնիզմի կողմնակից էր, Սիամանթոյի, Տերյանի ու Չարենցի նման կենսական երեւույթների առավել համակողմանի ներկայացնելու եւ բանաստեղծության արտահայտչական հնարավորությունները ընդլայնելու նպատակով կիրառում էր չափածոյի ուրույն ձեւեր, բանաստեղծական տողը եւ խոսքի երաժշտական համաչափությունը կառուցում էր տրամաբանական շեշտով, բառիմաստի ընդգծմամբ, կենսական երեւույթը, մարդկային խոհն ու ապրումը ներկայացնում բազմաչափ տարածության մեջ, մտածում էր բանաստեղծական շարքերով՝ դրանց դնելով բնորոշ վերնագրեր:

Լինելով հայ բանաստեղծական խոսքի զարգացման նախանձախնդիր՝ այդ մեծ մարդագետը ազգային եւ համաշխարհային գեղարվեստական ձեւերի համադրումով նոր ու անսովոր գրական որակ ստեղծեց, որին բնորոշ են թեմատիկ բազմազանությունը, ժամանակակից մարդու խոհերի ու զգացմունքների նորովի մարմնավորումը, խիզախ հարցադրումներն ու մտքի հզոր թռիչքները, դարի ցավերի թակարդն ընկած մարդուն ազատելու եւ իր լուսավոր ձգտումների ու երազների սանդուղքով վեր բարձրացնելու առաքելությունը: Իր մարդկային ու բանաստեղծական էության, իր սխրանքի խոր ըմբռնումով նա սերունդներին պատգամել է.

*Մտածե՛ք նաեւ ձեր որդո՛ւ մասին.*
*Խոսում եմ նաեւ նրա՛ անունից.*
*Դուք գնալո՞ւ եք,*
*Իսկ նա գալու է:*

«Մարդը ափի մեջ» գրքում, սակայն, Պ. Սեւակը համեմատաբար լավատես էր. գալիքի եւ սերունդների վերելքի մասին արտահայտվում էր անքաքույց հավատով: Իսկ «Եղիցի լույս»-ի շարքերում, մանավանդ առանձին մի քանի բանաստեղծություններում կարծես նրան անդադար ճնշում է ժողովրդի ընդհանուր վիճակից եկող մի անփարատելի թախիծ: Դարի մութին ու պնդերես խավարի բազավորությանը բանաստեղծը թեեւ հակադրվում էր լույսի, բարության ու գեղեցկության փառաբանությամբ, սակայն «պատացած մութը» դրանով չէր հերքվում, ծանր խավարը չէր թողնում հեռանում: Արշալույսն էլ պիտի գար զոհաբերությամբ, բանաստեղծի՛ ինքնազոհությամբ.

*Թողություն տուր, Տե՛ր, ծանըր խավարին,*
*Միայն թե թող նա թողնի հեռանա,*
*Թող ծառե՛րն անգամ (առանց եւ քամու)*
*Հարգանքով Նրա առջեւ կեռանան,*
*Միայն թե թող Նա թողնի հեռանա:*
*Մենք պահանջ չունենք,*
*Մենք զոհ ենք նույնիսկ,*
*Միայն թե թող նա թողնի հեռանա:*
*Մենք խոստանում ենք,*
*Եվ մենք իսկապե՛ս*
*Նրան չենք կարող ու չե՛նք մոռանա,*
*Միայն թե թող Նա թողնի հեռանա ....*
*Իսկ թե հարկ լինի,*
*նամանավանդ պետք,*
*Ես Խավարի հետ կմեկնեմ ինքըս՝*
*Դառնալով Նրա թագավորության*
*Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝*
*Անդարձ կմեկնեմ Խավարի հետ Ես,*
*Միայն թե մեր այդ մեկնումից հետո*
*Ժամանի ինքը՝ Արշալույսը, Գա,*
*Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,*
*Բայց մի քիչ հետո*
*Եվ ուրախանա՜, որ իմ կորստով*
*Կորել է նաեւ ինքը Խավարը...*

*Շարունակելի*

**Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ**
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# Ինչպե՞ս եկեղեցին կարող է սուրբ անվանվել, եթե այն լեցուն է մեղավորներով

Արդեն շուրջ 2000 տարի է, ինչ քրիստոնեությունը քարոզում է Երկնային Արքայությունը՝ հրավիրելով բոլորին (այդ թվում նաեւ մեղավորներին) ժառանգելու հավիտենական կյանքը.«Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28):

Հրեաները խորշում էին մեղավորներից եւ որոշ դեպքերում, Մովսեսի պատվիրանի համաձայն, քարկոծում օրինազանցներին: Բայց քանի որ քրիստոնեությունն օրենքի տառի վրա հիմնված կրոն չէր, այլ հոգու եւ ճշմարտության, ու նրա հիմնադիրն էլ՝ այդ ճշմարտության կրողը, այդ իսկ պատճառով մեղավորները չդատապարտվեցին, այլ նրանց հնարավորություն տրվեց քավել մեղքերն ու ապավինել Աստծո գութին: Իսկ սրա վառ օրինակն այն էր, որ երբ փարիսեցիները մեղադրեցին Քրիստոսին՝ մեղավորների հետ սեղան նստելու համար, Նա այսպես պատասխանեց. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին. եւ ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղավորներին» (Մարկ. Բ 17):

Այսպիսով՝ Քրիստոսն Իր վարդապետության հիմքը դրեց սիրո եւ ողորմության վրա, ու սրանով իսկ այդ վարդապետությունը տարբերվեց մնացած բոլոր կրոններից եւ ուսմունքներից:

Քրիստոսի շատ գաղափարներ գտնում ենք ուրիշ կրոններում՝ զրադաշտականության, բուդդայականության, կոնֆուցիոսականության մեջ, սակայն այս ուսմունքներից եւ ոչ մեկն իր մեջ չի պարունակում այնքան սեր եւ հոգատարություն, որքան քրիստոնեությունը. «Ձեզ ինչպե՞ս է թվում. եթե մի մարդ հարյուր ոչխար ունենա, եւ նրանցից մեկը մոլորվի, իննսունինը ոչխարը լեռան վրա չի՞ թողնի ու գնա որոնելու մոլորվածին: Եվ եթե պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե նրա վրա ավելի կուրախանա, քան իննսունիննի վրա, որ մոլորված չեն: Այսպես՝ իմ երկնավոր Հոր կամքը չէ, որ այս փոքրիկներից մեկը կորչի» (Մատթ. ԺԸ 12-14):

Բայց սա չի նշանակում, որ Քրիստոսը քաջալերում էր մեղավորներին մնալ իրենց մեղքերի մեջ, քանի որ Աստված սուրբ է, եւ Նրա մեջ խավարից մաս չկա: Նա ցանկանում է մեղավորների դարձը, զղջումը եւ փրկությունը («Անառակ որդու վերադարձը»):

Ամբողջ Նոր Կտակարանը լի է այսպիսի համարներով: Չկա կրոն, որտեղ մարդն այնքան սիրո արժանանա, որքան քրիստոնեության մեջ. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Յովհ. Գ 16):

Տեսեք, թե որքան ջերմություն է ճառագում աստվածային խոսքերից: Ինչպես մենք ենք մեր զավակների համար ամեն ինչ անում, եթե նույնիսկ հարկ լինի, կյանքներս չենք խնայի, այնպես էլ Աստված է սիրում մեզ եւ մեր փրկության համար իր Որդուն իսկ չխնայեց:

Աստծո մեջ մենք մեզ ինքնավստահ ենք զգում ու պատրաստ ենք հաղթահարելու ամեն մի դժվարություն: Աստվածային սերը թափանցում է սրտի մեջ ու ջերմացնում այն եւ վերակենդանացնում մեզ՝ մեր անկումային վիճակից: Մարդը մարմնավորից վերածվում է հոգեւոր էակի, քանի որ մարմնից ծնվածը մարմին է, իսկ հոգուց ծնվածը՝ հոգի: Եվ սա իրականանում է մկրտության միջոցով:





Հրեաները կարծում էին, որ խաչելով Քրիստոսին՝ վերջ կդնեն Նրա վարդապետությանը, սակայն տեղի ունեցավ հակառակը. Քրիստոսն իջավ դժոխք, ավերեց այն, կապեց սատանային եւ ազատեց մեղավորներին: Սա եւս մի վկայություն է, որ ցույց է տալիս Քրիստոսի անսահման սերը գայթածների նկատմամբ: Այս հատվածը հետաքրքիր է նաեւ նրանով, որ բոլորն են Քրիստոսինը, քանի որ ըստ Նոր Ուխտի՝ բոլոր ազգերն ու ժողովուրդները ունեն մի Աստված, որը հոգ է տանում ընդհանուրի համար, այլ ոչ միայն հրեաների կամ հույների. «Ես ունեմ նաեւ այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն. նրանց եւս պետք է այստեղ բերեմ. եւ իմ ձայնը պիտի լսեն. եւ պիտի լինի մի հոտ եւ մի հովիվ»:

«Գործք առաքելոցում»- (Բ 2-4) հիմնվում է առաջին եկեղեցական համայնքը՝ Ս. Հոգու առաջնորդությամբ, որը շարունակում է տարածել Քրիստոսի վարդապետությունը: Եվ ահա հայտնվում են առաջին նորադարձները՝ Պետրոս առաքյալի քարոզչությամբ. «Այս լսելով՝ ներկաները զղջացին իրենց սրտերում եւ ասացին Պետրոսին եւ մյուս առաքյալներին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր»: Պետրոսը նրանց ասաց. «Ապաշխարեցե՛ք, եւ ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, եւ պիտի ընդունեք Ս. Հոգու պարգեւը. որովհետեւ խոստումը ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռավորների համար, որոնց կկանչի մեր Տեր Աստվածը» (Գործք Բ 37-39):

Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, հիմնված առաքյալների կողմից (Թադեոս եւ Բարթողոմեոս) եւ Տիեզերական Եկեղեցու մասը կազմելով, մեղավորների եւ Եկեղեցու հարաբերության վերաբերյալ ունի իր յուրահատուկ մոտեցումը. փորձենք համառոտ ներկայացնել այն:

*Շարունակությունը՝ էջ 8*

Կենցաղում

# Ի՞նչ է կատարվում անմահ հոգու հետ ֆիզիկական մահվանից հետո, երբ աննյութ հոգին բաժանվում է նյութեղեն մարմնից...

## Մեր հյուրն է Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցու հովիվ Տ. Կյուրեղ քհն. ՏԱԼՅԱՆԸ

*«Նրա աճյունը, ինչպես որ հող էր, հող պիտի դառնա, եւ հոգին, որ Աստված էր տվել, պիտի վերստին Նրա մոտ գնա»* **(Ժողովող ԺԲ 7):**

**- Տե՛ր հայր, գիտենք, որ մինչ մեղանչելը՝ մարդ մարմնով անմահ էր, սակայն պատվիրանազանցության պատճառով մարդը դարձավ մահկանացու: Մահն անխուսափելի է յուրաքանչյուրիս համար: Եվ ինչպես Սուրբ Գիրքն է ուսուցանում, մահվամբ ամեն ինչ չի վերջանում: Երբ վրա է հասնում մարդու վախճանի ահեղ ու սարսափելի օրը, հոգու աստվածաշեն տաճար մարմինը քակտվում է, եւ հոգին ու մարմինը միմյանցից բաժանվում են: Ի՞նչ է կատարվում մարդու անմահ հոգու հետ ֆիզիկական մահից հետո:**

- Ինչպես Եկեղեցու սուրբ հայրերն են ասում, մահվամբ բացվում են դռները հավիտենականության, մահը վերջին օրն է այս ժամանակավոր կյանքի եւ առաջին օրը՝ հավիտենականության: Մահը վերջը չէ, այլ սկիզբն է միայն: Պետք է գիտենանք, որ արդարների եւ մեղավորների մահը տարբեր է: Մեղավոր կյանքով ապրող մարդու համար մահն անակնկալ է, քանի որ նա կապված է այս աշխարհի վայելքներին, ուստի սարսափ է ապրում եւ տանջվում, երբ իր առջեւ հայտնվում է հրեշտակը՝ հոգին տանելու համար: Վարդապետներն ասում են, որ այդպիսի մեղավորի առջեւ հրեշտակը հայտնվում է խիստ դեմքով, հրեղեն սրով, եւ երբ հոգին բաժանվում է մարմնից, հրեշտակը վերցնում է եւ ուղեւորվում վեր: Իսկ արդար մարդու համար մահն այնքան էլ անսպասելի չէ, քանի որ նա իր ողջ կյանքում խոկացել է մահվան մասին, մահվան հետ հաշտ է ապրել, այսինքն՝ «ընկերացել» է մահվան հետ, այդ իսկ պատճառով նա խուճապահար չի լինում, քանի որ գիտակցում է, որ մահկանացու է: Ուստի հրեշտակը նրա հոգին վերցնում եւ տանում է վեր՝ երկինք:



**- Հայրերն ասում են, որ ահավոր ու սոսկալի է այն օրը, երբ գալիս են աննյութ հոգին նյութեղեն մարմնից բաժանելու: Սոսկալի, անծանոթ եւ ահազդու է ճանապարհը, որն անցնում է հոգին հրեշտակների ուղեկցությամբ: Ըստ սբ Վ. Այգեկցու՝ «սուրբերն անգամ երկնչեցին, զարհուրեցին այդ ճանապարհից, ինչպես դժոխքից, եւ աղոթեցին Աստծուն նեղ ու դառնատեսիլ ճանապարհի համար»: Ինչո՞ւ է այդ ճանապարհն այդքան ահազդու:**

- Ըստ սուրբ Ն. Շնորհալու՝ երկնքից ներքեւ գտնվում է այսերի (դեւերի) ոլորտը, եւ հոգին անցնում է այդ դիվական ոլորտով: Այս կյանքում հազվադեպ է պատահում, որ դեւեր հայտնվեն մեր առջեւ իրենց իրական տեսքով (Աստծո ողորմությամբ եւ շնորհով է, որ այդ չի լինում), քչերը կդիմանային նրանց սարսափելի տեսքին, չարությանը: Վարդապետներն ասում են, որ մեղավորի հոգին սաստիկ գարշահոտություն է արձակում եւ տգեղ տեսք ունի, ապա որքան առավել սարսափելի կլինի դեւերի տեսքը:

Արդարի հոգին պայծառ եւ լուսավոր է, ուստի դեւերը շլանում, կուրանում են եւ չեն կարողանում խոչընդոտել նրա երկինք ելնելուն, տրտմում են եւ հեռանում: Հրեշտակն ուրախությամբ հոգին տանում է այն ժամանակավոր կացարանը, որտեղ պետք է սպասի մինչեւ Տիրոջ երկրորդ գալուստը, մինչեւ Ահեղ Դատաստան: Իսկ երբ մեղավորի հոգին արձակվում է չար մարմնից, չար հոգիները նրան ընդառաջ են գալիս: Ներկայացնում են այդ հոգու բոլոր չար գործերը եւ ասում, թե՝ մերն է եւ գործել է մեր կամքի համաձայն: Սակայն բարի հրեշտակը սաստում է դեւերին, եւ նրանք ետ են ընկրկում:

**- Ուրեմն դեւերն իշխանություն չունե՞ն մարդու հոգու վրա:**

- Ո՛չ: Հիշենք Տիրոջ խոսքերը. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին եւ մարմինը» (Մատթ. Ժ 28), այսինքն՝ պետք է Աստծուց վախենալ:

**- Տե՛ր հայր, հայրերն ասում են, որ երբ հոգին դուրս է գալիս մարմնից, թեթեւանում է եւ յոթնապատիկ իմաստնանում է, լուսավորվում: Արդյոք հոգին գիտի՞, թե ինչ է ժառանգելու:**

- Այո՛, հոգին իմաստնանում եւ պայծառանում է եւ արդեն գիտի, թե ինչ է սպասվում իրեն: Արդարներն արդարների



կայաններում սպասում են՝ լցված անմահության հույսով, տեսնում են եւ գիտեն, թե ինչ է լինելու, սպասում են Տիրոջ ողորմածությամբ հավիտենական կյանքը վայելելուն: Նմանապես եւ մեղավորների հոգիները մեղավորների կայաններում տանջվում ու տառապում են, տեսնում են դառնակերպ տառապանքները, որոնք պահված են իրենց համար եւ նախքան այն ստանալը՝ սարսափից կծում են: Գիտեն, որ հավիտենական տանջանքների են մատնվելու, զղջում են իրենց ապրած չար կյանքի համար, ինչու չէ, նաեւ տանջվում են, քանի որ զրկվեցին նաեւ այս ժամանակավոր կյանքի վայելքներից, որոնց կապված էին այս աշխարհում: Իսկ արդարի հոգին ուրախանում է, քանի որ մարմնից անջատվելով՝ ավելի է մոտենում Աստծուն: Շատերի ընկալմամբ՝ մարմինը հոգու համար բանտ է: Սակայն այդպես չէ: Աստված մարդուն հոգով եւ մարմնով է արարել: Մարդն ամբողջական եւ կատարյալ է, երբ մարմին ունի: Մարմինը գործիք է, որ կարող է ծառայել Աստծուն, ուստի մարդն առանց մարմնի անկատար է:

**- Տե՛ր հայր, իսկ ե՞րբ է մարդը բանական հոգի ստանում, ե՞րբ է հոգին ի հայտ գալիս:**

- Բեղմնավորման պահից իսկ մարդուն հոգի է տրվում, մարդը մարդ է առաջին իսկ րոպեից: Ուստի հղիության արհեստական ընդհատումը սպանություն է, նույնիսկ ավելի ծանր, քան մարդասպանությունը, քանի որ եթե մարդասպանության ժամանակ զոհը կարող է դիմադրել, փախչելու փորձ անել, ապա այս պարագայում մոր որովայնում ձեւավորվող պտուղը բացարձակ անօգնական էակ է, որն օգնության, խնամքի կարիք ունի: Հայրերն ասում են, որ Դատաստանի օրը նրանք կանգնելու են մեր առջեւ եւ նայելու են մեր աչքերին: Սա սարսափելի մի իրողություն է:

**- Այդ մանուկների հոգիները, որոնք այդպես էլ լույս աշխարհ չեկան, զրկվեցին կյանքից, ի՞նչ է լինում: Կարո՞ղ ենք ասել, որ նրանք խառնվում են հրեշտակների դասերին:**

- Իհարկե: Մինչեւ որոշակի տարիք երեխաներն առանց խոստովանության մոտենում են Սուրբ Հաղորդությանը: Սաղմոսերգուն ասում է. «Երանի՜ այն մարդուն, որին Տերն այլեւս մեղավոր չի համարում» (Սղմ. ԼԱ 2): Սա կարծես հենց երեխաների համար է ասված: Ուրեմն, եթե այս աշխարհում ապրող երեխաներն առանց խոստովանության կարող են մոտենալ Սուրբ Հաղորդությանը, առավել եւս լույս աշխարհ չեկած փոքրիկների հոգիները երկնքում են՝ հրեշտակների դասերում:

**- Տե՛ր հայր, արդյո՞ք հոգին տեսնում է, գիտի, թե ինչ է կատարվում աշխարհում եւ երբեւէ կարո՞ղ է վերադառնալ:**

- Վերադառնալ չի կարող: Վարդապետներն ասում են, որ արդարների հոգիները գիտեն, տեսնում են, թե ինչ է կատարվում երկրի վրա եւ բարեխոս են Աստծո առջեւ մեզ համար: Սակայն մեղավորները չգիտեն, չեն տեսնում: Ըստ որոշ հայրերի՝ եթե արդարները գիտեն, ապա մեղավորներին դեւերն են պատմում այստեղի մասին:

**- Փաստորեն, հոգիները պահվում են մինչեւ համընդհանուր հարության օրը, մինչեւ հոգիների եւ մարմինների Դատաստանը: Հատուցումն Ահեղ Դատաստանից հետո՞ է լինելու:**

- Հատուցումը լինելու է համընդհանուր հարությունից, Ահեղ Դատաստանից հետո, երբ նրանցից յուրաքանչյուրին կհատուցվի ըստ իրենց գործերի, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, որ ինչ որ ցանենք, այն էլ կհնձենք: Նշեմ նաեւ, որ մեր ննջեցյալների հոգիների փրկության համար կարեւորվում են մեր աղոթքները, նրանց անունից մեր կատարած բարեգործությունները, հոգեհանգստյան արարողությունները, հատկապես այն աղքատների աղոթքները, որոնց նկատմամբ մեր ննջեցյալները ողորմած են գտնվել:

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

---

**Մետրոպոլիտ Անտոնի ՍՈՒՐՈԺՍԿԻ**

# ԿՅԱՆՔՈՒՄ ԱՄԵ՛Ն ԻՆՉ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒ՛Ն Է

**(5 նոյեմբերի, 1967 թ.)**

Կյանքում ամեն ինչ ողորմություն է, եւ ամեն ինչ կյանքում կարող է ուրախություն լինել, եթե ուրախալից սրտով հավասարապես ընդունվեն թե՛ այն, ինչ տրվում է, թե՛ ինչ որ վերցվում է: Մենք հաճախ մտածում ենք, թե ուրախություն լինում է միայն նրանից, ինչը ստանում ենք. իսկ ինչպիսի՛ մեծ, ցնծալի ուրախություն է լինում, երբ ինչ-որ բանից կարծես զրկվել ենք, սակայն դրանով դրսեւորվել է Աստծո իմաստուն հոգածությունը:

Ուզում եմ հիշել ոմն ճգնավորի մի խոսքը:

Նա ապրում էր լքվածության մեջ, թեեւ ինքը շատերին էր ծառայում. բայց նրանք, ում ծառայում էր, նրա մասին քիչ էին հոգ տանում: Եվ մի անգամ մի եկվոր, ով ներկա էր նրա առավոտյան աղոթքին, որում նա գոհանում էր Աստծուց՝ Նրա անթիվ բարերարությունների համար, ասաց նրան. «Ինչպե՞ս կարող ես ստել Աստծո առաջ, ինչպե՞ս կարող ես Նրանից շնորհակալ լինել Նրա պարգեւների համար. չէ՞ որ Նա քեզ ոչինչ չի տվել...»: Իսկ ճգնավորը, նայելով եկվորին, ասաց. «Դու կյանքն այնպես չես հասկանում, ինչպես հարկն է: Դու մտածում ես, որ ես չունեմ ընկերներ, ջերմություն, կերակուր, ոչինչ կարծես թե չունեմ: Բայց ես այլ կերպ եմ տեսնում ամեն ինչ: Տերը նայել է իմ հոգու խորքը եւ տեսել, որ ես չեմ աճի մինչեւ այն չափը, որին Ինքը կանչել է ինձ, եթե ինձ չտրվի ե՛ւ քաղցել, ե՛ւ մրսել, ե՛ւ միայնակ լինել: Եվ Նա ինձ ավելցուկով է տվել թե՛ մարդկանցից լքվածությունը, թե՛ զրկվածությունն այն ամենից, ինչ փնտրում են մարդիկ: Դու սրանում զրկվածություն ես տեսնում, իսկ ես՝ իմ օժտվածությունը...»:

Մեզանից ոչ ոք այդպիսի ծայրահեղ պարագաներում չի ապրում, եւ մեզանից քչերը կկարողանային այդ ամենը կրել եւ փրկվել, այլ մեզանից յուրաքանչյուրը շարունակ բողոքում է, թե ինքն ինչ-որ բանից զրկված է. իր վրա ուշադրություն չեն դարձնում, իր հետ ընկերություն չեն անում, իր մասին հոգ չեն տանում, ինքը չունի այն, ինչը կուզեր ունենալ մարմնավոր, հոգեկան եւ հասարակական աշխարհում: Մենք միշտ խոսում ենք նրա մասին, ինչը չունենք, եւ երբեք չենք մտածում, որ Տերը մեզ չի զրկել , այլ օժտել է՝ ազատելով մեզ, հնարավորություն տալով հարուստ լինելու, սակայն ա՛յլ կերպ:

Մտածե՛ք այս մասին. որովհետեւ տրտունջը, նախանձը եւ նման այլ զգացումները ոչ միայն ավերում են մեր հոգին, այլեւ անտեղի՛ ավերում. դրա համար առի՛թ էլ չկա, եթե միայն հասկանայինք, թե որքան առատորեն է Տերը մեզ պարգեւներ բաշխում եւ ինչպես է քայլ առ քայլ տանում ապականացուից դեպի անապականը, ունենալու կեղծ վիճակից դեպի ճշմարիտ հարստացումը:

Օգնի՛ր մեզ, Տե՛ր, հասկանալու, որ ամեն ինչ ողորմություն է, ամեն ինչ՝ հարստություն, եւ այդժամ նահատակների ու սրբերի եկեղեցու հետ՝ այն պարզ ու կենդանի մարդկանց, ովքեր, սակայն, կարողացան տեսնել իրերն այնպես, ինչպես դրանք կան, մենք կկարողանանք միանաբար գոհություն



հայտնել Աստծուն ամեն ինչի համար՝ իրապես ցնծացող ու շնորհակալ սրտով: Ամեն:

*Թարգմանությունը՝*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

**Նիկոլայ ԲԵՐԴՅԱԵՎ**

# ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 5*

Ժողովրդի տառապանքների մասին խոսում են այլաբանական իմաստով: Օբյեկտների աշխարհի ոչ մի ընդհանրություն չի կարող ընդունվել անձնավորության կողմից: Կոլեկտիվ իրականությունները՝ իրական արժեքները եւ ոչ թե իրական անձնավորությունները, նրանց էկզիստենցիալությունը վերաբերում են անձնավորությունների իրականությանը: Կարելի է ընդունել կոլեկտիվ հոգիների գոյությունը, բայց ոչ կոլեկտիվ անձնավորությունների: Անձնավորությունների կոլեկտիվ եւ կամ՝ «սիմֆոնիկ» հասկացությունը հակասական հասկացություն է, թեպետ մենք անձնավորում ենք մեզ սիրելի բոլոր անշունչ առարկաներն ու հետաքրքրող գաղափարները եւ այն ամենը, ինչը կամենում ենք: Դա հենց առասպելագործության պրոցես է, առանց որի չկա կյանքի լարվածություն, սակայն դա անձնավորության իրական տվյալը չէ: Անձնավորությունը ոչ միայն կարող է ցավ զգալ, այլ որոշակի իմաստով անձնավորությունը հենց ինքը ցավն է: Պայքարը հանուն անձնավորության, անձնավորության հաստատման, ցավոտ է: Անձնավորության ինքնաիրագործումը ենթադրում է դիմադրություն, պահանջում է պայքար աշխարհի հպատակեցնող իշխանությունների դեմ, հրաժարում՝ աշխարհի հետ համաձայնության գնալու: Անձնավորությունից հրաժարվելու, շրջակա աշխարհի հետ տարրալուծվելու համաձայնությունը կարող է քչացնել ցավը, եւ մարդը հեշտությամբ գնում է դրան: Ճորտության համաձայնվելը պակասեցնում է ցավը, անհամաձայնությունը՝ շատացնում: Մարդկային աշխարհում ցավն անհատականության ծնունդ է, նրա՝ իր կերպարը պահպանելու պայքարը: Ուստի ազատությունը տառապանք է ծնում....



Մարդու արժանապատվությունը, այսինքն՝ անձնավորությունը, ազատությունը, ենթադրում է համաձայնվել ցավին, ցավ ապրել: Իմ ժողովրդի, կամ էլ հավատի նսեմացումը ինձ է ցավ պատճառում, բայց ոչ թե ժողովրդին, ոչ թե կրոնական համայնքին, որոնք չեն տիրապետում էկզիստենցիալ արժեքներին, եւ բնականաբար, ցավի զգայարանին: Ցավ ապրելը բնորոշ է բոլոր կենդանի արարածներին, եւ ամենից առաջ՝ մարդուն, ինչպես եւ կենդանիներին՝ թեեւ այլ կերպ, բայց ոչ կոլեկտիվ իրականությանը, ոչ կատարյալ արժեքներին: Սա հիմնարար հարց է, դրանով որոշվում է անհատականացված գեղագիտությունը: Մարդը, մարդու անձնավորությունը վերին արժեք է եւ ոչ թե հանրային, ոչ թե կոլեկտիվ իրականություն՝ օբյեկտների աշխարհին պատկան, ինչպես հանրությունը, ազգը, պետությունը, քաղաքակրթությունը, եկեղեցին: Դա հենց արժեքների անհատականացված դրույթն է....

Հասկանալու համար, թե ինչ է անձնավորությունը, շատ կարեւոր է որոշել անձնավորության եւ անհատականության միջեւ եղած տարբերությունը:

Անհատականությունը բնապաշտական, կենսաբանական, սոցիոլոգիական կատեգորիա է: Անհատականությունը որեւէ ամբողջի անբաժան մասն է, ատոմը: Այն ոչ միայն կարող է լինել ցեղի, տոհմի, հանրության, ինչպես եւ ողջ տիեզերքի մի մասնիկը, այլեւ նա որպես ամբողջի մասնիկ է մտածում, եւ այդ ամբողջից դուրս նա չի կարող կոչվել անհատականություն: Անհատականությունը, սակայն բնութագրվում է ե՛ւ որպես ամբողջի ենթակա մասնիկ, ե՛ւ որպես եսապաշտական ինքնահաստատվածություն: Այդ պատճառով էլ անհատականությունը, որն առաջացել է լատիներեն individuum - անբաժանելի բառից, բնավ չի նշանակում անկախություն՝ ամբողջի, տիեզերական, կենսաբանական եւ սոցիալական պրոցեսների նկատմամբ, այլ նշանակում է ենթակա մասնիկի տարրանջատում եւ անզոր ապստամբություն՝ ընդդեմ ամբողջի: Անհատականությունը սերտորեն կապված է նյութական աշխարհի հետ, այն տոհմի, ցեղի ծնունդ է: Անհատականությունը ծնվում է հորից ու մորից, ունի կենսաբանական ծագում՝ տոհմային, ինչպես եւ սոցիալական ժառանգականությամբ դետերմինացված: Չկա անհատականություն՝ առանց սեռի, եւ չկա տոհմ՝ առանց անհատականության: Անհատականությունն ամբողջովին գտնվում է տոհմայինն ու անհատականը տարբերակող կատեգորիաներում, անհատականությունը տոհմային, կենսաբանական եւ սոցիալական պրոցեսներում հանուն իր գոյության մշտապես պայքար է տանում: Մարդը անհատականություն է, բայց նաեւ միայն անհատականություն չէ: Անհատականությունը կապված է նյութական աշխարհի հետ եւ սնվում է նրանով, սակայն ունիվերսալ չէ, եւ որպես այդպիսին՝ չունի ունիվերսալ բովանդակություն: Մարդը միկրոկոսմոս է, եւ սակայն, ունիվերսալն անհատականության որակը չէ: Մարդը նաեւ անձնավորություն է, եւ անձնավորության հետ է կապված մարդու գաղափարը, նրա կոչումն աշխարհում: Այստեղ ահա ամեն բան փոխվում է:

Իսկ անձնավորությունը ոչ թե բնապաշտական, այլ հոգեւոր կատեգորիա է...

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝***

***Գոհար ՎԱՐԴԱՆՅԱՆԻ***



*Սկիզբը՝ էջ 6*

# Ինչպե՞ս եկեղեցին կարող է սուրբ անվանվել, եթե այն լեցուն է մեղավորներով

Նախ՝ *եկեղեցի* հունարեն «էկկլեսիա» բառն է, որը նշանակում է հավատացյալների ժողով: Սա նշանակում է, որ եկեղեցու անդամ լինելու համար առաջին հերթին պահանջվում է հավատալ Քրիստոսին, ընդունել որպես Տեր եւ Փրկիչ եւ մկրտվել Ս. Երրորդության անունով (բնականաբար՝ հոգեւորականի կողմից), իսկ այնուհետեւ պիտի ապրել եկեղեցու խորհուրդների համաձայն, որոնք յոթն են.

1. Մկրտություն.
2. Դրոշմ.
3. Ապաշխարություն.
4. Ս. Հաղորդություն.
5. Պսակ.
6. Ձեռնադրություն.
7. Կարգ հիվանդաց:

Այս յոթ խորհուրդներից չորսը պարտադիր է յուրաքանչյուր հավատացյալի համար, իսկ մնացած երեքը՝ ըստ ցանկության:

Ըստ ուղղափառ վարդապետության (Շնորհք եպս. Գալուստեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1993, էջ7)՝ եկեղեցին բաժանվում է երկու մասի՝ հաղթանակած եւ զինվորյալ: Հաղթանակած եկեղեցին այն հավատացյալներն են, որոնք անցնելով այս կյանքի փորձությունններով՝ հավատարիմ մնացին Քրիստոսին ու փոխադրվեցին հավիտենական կյանք: Իսկ զինվորյալ եկեղեցին այն հավատացյալներն են, որոնք դեռեւս պայքարի մեջ են եւ ապավինում են սուրբերի, այսինքն՝ հաղթանակածների ու Աստծո օգնությանը: Խոսելով եկեղեցու սրբության մասին՝ Շնորհք սրբազանն ասում է. «Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին սուրբ է.

ա. Ըստ հիմնադրին...

բ. Ըստ վախճանին, որ է սրբանալ եւ սրբացնել իր եկեղեցիին անդամները:

գ. Ըստ միջոցներու... (վարդապետությունը եւ Ս. խորհուրդները).

դ. Ըստ բնութեան, որովհետեւ եկեղեցին իր բնութեամբ, իր էութեամբ սուրբ է, այսինքն՝ անարատ, անբիծ առաջի Աստուծոյ եւ անջատեալ աշխարհի միւս ընկերութիւններէն»:

Իսկ նշելով եկեղեցու անդամների սրբության կամ մեղավորության մասին՝ ասում է. «Ստոյգ է,որ եկեղեցիի բոլոր անդամները հաւասար չափով սուրբ չեն, սակայն որովհետեւ իր կէտ նպատակին սուրբ է եւ իր մէջ կը գործեն սրբարար շնորհքներ եւ խորհուրդներ, հետեւաբար իբրեւ ամբողջութիւն սուրբ է եկեղեցին» (նույն տեղում):

Եկեղեցին սուրբ է նաեւ իր գործունեությամբ, որովհետեւ հոգ է տանում իր հավատացյալ անդամների մասին, որպեսզի նրանք դառնան ավելի մաքուր՝ խրատելով եւ ուսուցանելով նրանց: Նա նշում է նաեւ (նույն տեղում), որ մենք չենք կարող եկեղեցու բոլոր անդամներից կատարելություն ակնկալել, ինչպես նաեւ որոշ անդամների սխալները չեն կարող ստվերել ընդհանուր եկեղեցու սրբությունը: Այս առումով Արշակ Տեր-Միքելյանը նշում է. «Ըստ որում Եկեղեցին իւր մէջ թէ ընդհանրութիւն եւ թէ անհատներ ունենալով սրբութիւնն ոչ թէ մէկի կամ միւսի մէջ է ճանաչում, այլ թէ ընդհանրութեան եւ թէ անհատների մէջ» (Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1993, էջ 261):

Երբ հավատացյալ անդամները հեռանում են ճշմարիտ ճանապարհից, եկեղեցին փորձում է պահպանել նրանց, բայց երբ իր ներսում հերետիկոսություններ են առաջանում, ապա նա նզովում եւ դուրս է անում նման գաղափարներ տարածողներին, ինչպես օրինակ՝ Արիոսին, Մակեդոնին, Նեստորին եւ այլն.

«...որտեղ մեղանչում է անհատը, այնտեղ ի յայտ է գալիս ընդհանրութիւնը, համայնքը, եկեղեցին իր զինուորեալ բոլոր գործունէութեամբ եւ կռւում է խաւարի դէմ, իսկ որտեղ ընդհանրութիւնն է դէպի խարխափում գնում, այնտեղ երեւան է գալիս նոյն եկեղեցուց սքանչելի հայրապետների ու վարդապետների, ճաճանչների ու ծիրքերի խաչվառ ու հաւատավառ առաջնորդութիւնը դէպի լոյս» (Էջ 262): Սխալ է նաեւ կարծել, որ եկեղեցու մեջ բոլորը միեւնույն կատարելության աստիճանին են հասնում (տես Ընթացք տեսական աստուածաբանութեան, Հ. Ստեփանոս վրդ. Սարեան, Վենետիկ, Ս.Ղազար 1894, էջ 231). կան առավել եւ նվազ կատարելությամբ օժտված անդամներ, եւ կան, որ կենդանի են, ինչպես նրանք, որոնք աստվածային սիրով միացած են իրենց գլխի՝ Քրիստոսի հետ: Իսկ մեռյալները նրանք են, որոնք մկրտված են եւ հավատում են, բայց սրբարար շնորհքից զրկված են ու Քրիստոսին միացած չեն, այսինքն՝ չեն ապրում քրիստոնեական չափանիշներով:

***Կարեն դպիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

***Գեւորգյան հոգեւոր ճեմարանի***

***Ե լսարանի սան***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝**
**(0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 17. 7. 2006 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**